ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՉԸ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

12.12.2018 16:06

Հայաստանի Հանրապետության հարգելի՝ դատավորներ,

2019 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտնելու ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերի՝ փաստաբանների նկատմամբ դատավորների կողմից, որպես դատական սանկցիա դրամական տուգանք կիրառելու հնարավորություն նախատեսող դրույթները:

Սկսած 2017թ. հոկտեմբերի 31-ից, ՀՀ փաստաբանների պալատը տարբեր առիթներով այս նախագծերի վերաբերյալ իր բացասական դիրքորոշումը բարձրաձայնել է:

2018 թվականի հունվարի 16-ին ՀՀ փաստաբանների պալատում փաստաբանների կողմից քննարկումների արդյունքում ձևավորվել է նախաձեռնող խումբ, որն էլ կազմակերպել է ակտիվ գործողություններ ընդդեմ նշված նախագծերի ընդունման:

Մոտ 1500 փաստաբան միացել է այդ նախագծերը դատապարտող հայտարարությանը, իսկ 2018թ. հունվարի 22-ից տարբեր մարզերի փաստաբանները բողոքի ակցիաներ են կազմակերպել՝ մեկական օրով հրաժարվելով իրենց մարզում պետական մարմիններում պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

2018 թվականի փետրվարի 7-ին և 8-ին Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փաստաբաններն իրականացրել են բողոքի ակցիաներ՝ այդ օրերին հրաժարվելով պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

Փաստաբաններին իրենց զորակցությունն են հայտնել նաև Ազգային ժողովի «Ծառուկյան», «Ելք» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունները, որը դրսևորվել է նաև նշված խմբակցությունների պատգամավորների քննադատող ելույթներով և քվեարկությամբ:

2018 թվականի փետրվարի 9-ին ՀՀ Ազգային ժողովը 59 կողմ, 25 դեմ, 10 ձեռնպահ ձայներով ընդունել է փաստաբանների նկատմամբ դատական տուգանք սահմանող նորմեր պարունակող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն՝ իր փաթեթով:

2018թ. փետրվարի 12-ին ՀՀ արդարադատության նախարարը հրապարակավ հայտնել է, որ՝ *«... եթե փաստաբանները կարծում են, որ այս դատական սանկցիայի կիրառման ընթացքում կարող են առաջանալ որոշակի ռիսկեր և իրենց պատկերացմամբ կան դրանք չեզոքացնելու հավելյալ միջոցներ կամ հնարավորություններ, Արդարադատության նախարարությունը պատրաստ է լսել նրանց մոտեցումներն ու փաստարկները: Ներկայումս մենք աշխատում ենք փաստաբանության մասին օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի վրա ու կարծում եմ, որ այդ գործընթացի շրջանակում կարող ենք քննարկել փաստաբաններին հուզող այս և մնացած խնդիրները:»:*

ՀՀ արդարադատության նախարարության վերոհիշյալ դիրքորոշումից հետո, նախաձեռնող խումբն առժամանակ կասեցրել է բողոքի ակցիաները:

2018 թվականի մայիսի 23-ին ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ արդարադատության նորանշանակ նախարար Արտակ Զեյնալյանին, խնդրելով օժանդակել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում՝ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելու հնարավորություն նախատեսող նորմերը փոփոխելու հարցում:

Առ այսօր ՀՀ փաստաբանների պալատը չի ստացել այս հարցի առնչությամբ ՀՀ կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

Փաստաբանների պալատը և նախաձեռնող խումբը շարունակելու են այս հարցի վերաբերյալ իրենց հետևողական քաղաքականությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված դատավարական նորմերի առնչությամբ քննադատական դիրքորոշում ներկայացրած խմբակցություններում ընդգրկված կուսակցություններն («Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, «Իմ Քայլ» դաշինքի մեջ մտնող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն) են այսօր ներկայացնում ՀՀ Ազգային ժողովը, ինչը հիմք է տալիս կանխատեսելու, որ այս հարցով, ինչպես նորընտիր կառավարությունը, այնպես էլ նորընտիր Ազգային ժողովը պահպանելու են իրենց ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ դիրքորոշումը,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակային առումով հնարավոր է, որ այդ հարցերը հստակեցվեն 2019 թվականին,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անունից կոչ եմ անում բոլոր դատավորներին՝ ցուցաբերել մասնագիտական համերաշխություն և ձեռնպահ մնալ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելուց, մինչև նշված հարցով ՀՀ Ազգային ժողովի վերջնական դիրքորոշումը ստանալը:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

Առաջարկվող նորություններ

17.01.2018 ԲԱԶՄԱԹԻՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՊԱՀԱՆՋ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

18.01.2018 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀՂԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

18.01.2018 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 907 ՓԱՍՏԱԲԱՆ

19.01.2018 ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 1110 ՓԱՍՏԱԲԱՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })